ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Վ - 01/19

ք. Երևան 08 Հունվար 2019թ.

«Երևանի Քիմիա – դեղագործական ֆիրմա» ԲԲԸ ի դեմս տնօրեն Մ. Մաթևոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության համաձայն, այսուհետ՝ «Վարձատու», մի կողմից, և «Սպորտ. բժշկ. և հակադոպինգային ծառ. հանրային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ն. Մանուկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության համաձայն, այսուհետ՝ «Վարձակալ», մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Վարձատուն վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում սեփականության և օգտագործման իրավունքով իրեն պատկանող Երևան քաղաքի Աճառյան 2-րդ նրբանցքի թիվ 6 հասցեում գտնվող վարչական շենքի երրորդ հարկը ամբողջությամբ: Վարձատուն երաշխավորում է, որ Տարածքը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1 պահանջել Վարձակալից ժամանակին կատարել Պայմանագրով սահմանված վճարումները, օգտագործել Տարածքը Պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:
2.1.2 միակողմանի լուծել Պայմանագիրը՝ 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր ծանուցելով այդ մասին Վարձակալին:

2.2 Վարձատուն պարտավոր է՝

2.2.1 Տարածքը հանձնել Վարձակալին պատշաճ և կահավորված վիճակում.
2.2.2 Վարձակալին նախազգուշացնել Տարածքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին.
2.2.3 Տարածքը Վարձակալին հանձնել հանձնման-ընդունման ակտով Պայմանագրի կնքման պահից հինգ օրվա ընթացքում.
2.2.4 ապահովել Վարձակալի կողմից Տարածքի արտաքին հսկողությունը և բացառապես Վարձակալի լիազորված ներկայացուցիչների ու նրանց ուղեկցությամբ երրորդ անձանց Տարածք մուտք գործելու հնարավորությունը.
2.2.5 Տարածքում կամ դրան հարակից տարածքներում հրդեհ բռնկվելու դեպքում հնարավորինս շտապ տեղեկացնել այդ մասին Վարձակալին և ձեռնարկել հնարավոր միջոցները հրդեհը մարելու ուղղությամբ՝ մինչև Վարձակալի կամ հրշեջ ծառայության ներկայացուցիչների ժամանումը:

2.3 Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1 միակողմանի լուծել պայմանագիրը՝ 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր ծանուցելով այդ մասին Վարձատուին:

2.4 Վարձակալը պարտավոր է՝

2.4.1 Տարածքն օգտագործել պայմանագրի պայմաններին և Տարածքի նշանակությանը համապատասխան.

2.4.2 Տարածքը պահպանել պատշաճ վիճակում.

2.4.3 Վճարել վարձավճար սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված՝ կարգով.

2.4.4 Տարածքը վերադարձնել պայմանագրի դադարման պահից հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

## 3. Վարձավճարի չափը և վճարման ժամկետը

3.1 Տարածքի վարձակալության համար ամսական վարձավճարը սահմանվում է 216924/երկու հարյուր տասնվեց հազար ինը հարյուր քսանչորս / ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

3.2 3.1կետում նշված գումարը ենթակա է ամենամսյա վճարման՝ կանխիկ կամ փոխանցումով, յուրաքանչյուր ամսվա 10 -ից ոչ ուշ /տվյալ ամսվա համար/:

## 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Վարձակալի կողմից Տարածքի շահագործման ընթացքում վերջինիս վնասման համար պատասխանատվություն է կրում Վարձակալը:

4.2 Վարձավճարի վճարման կետանցի դեպքում Վարձակալը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0,15% (զրո ամբողջ տասնհինգ տոկոսի) չափով:

4.3 Պայմանագրով սահմանված վարձավճարի վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավել վարձավճար չմուծելու դեպքում Վարձատուն իրավունք ունի միակողմանի վաղաժամկետ լուծել պայմանագիրը:

4.4 Սույն պայմամանագիրը դադարելուց հետո տարածքը չհանձնելու կամ այն ժամկետի խախտմամբ հանձնելու դեպքում Վարձատուն իրավունք ունի պահանջել վարձավճար կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար:

4.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 5. Վեճերի լուծման կարգը

5.1 Սույն Պայմանագրով ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են կողմերի բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:

## 6. Այլ պայմաններ

6.1 Սույն պայմանագրով պարտավորությունների չկատարումը հիմնավոր է միայն անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում (ֆորս-մաժորային պայմաններում): Դրանց թվին են պատկանում տարերային աղետները, էքստրեմալ եղանակային պայմանները, հրդեհները, պատերազմները, ռազմական գործողությունները, արդյունաբերական աղետները, գործադուլները, կառավարության կամ ուժային կառուցակարգերի որոշումները, բլոկադան, էմբարգոն և կողմերի կամքից անկախ այլ հանգամանքները:

6.2 Կողմը, որի համար առաջանում են ֆորս-մաժորային հանգամանքները, պարտավոր է այդ մասին գրավոր կամ բանավոր տեղեկացնել մյուս կողմին:

6.3 Պարտավորությունների կատարման ժամկետը հետաձգվում է մինչև ֆորս-մաժորային պայմանների դադարումը:

## 7.Եզրափակիչ դրույթներ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 8-ին և գործում է մինչև 2021 թվականի Դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.2 Սույն պայմանագրի վերաբերյալ բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են փոխադարձ համաձայնությամբ և ձևակերպվում են լրացուցիչ գրավոր համաձայնությամբ:

7.3 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կամ դադարել Կողմերից մեկի նախաձեռնությամբ, այդ մասին 10 /տասը/ օր առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցելու միջոցով:

7.4 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

## 8.Կողմերի իրավաբանական հասցեները և բանկային ռեկվիզիտները .

| Վարձատու՝ | Վարձակալ՝ |
|---|---|
| «Երևանի Քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ | «Սպորտ. բժշկ. և հակադոպինգային ծառ. հանրային կենտրոն » ՊՈԱԿ |
| ք. Երևան | Ծիծեռնակաբերդ 5 Սպորտ Ավան |
| Աճառյան 2-րդ նրբանցք թիվ 6 | «ԱՇԻԲ» ՓԲԸ |
| «Ինեկոբանկ» ՓԲԸ | հ/հ 2201151140497000 |
| հ/հ 205002211659 | ՀՎՀՀ 01837784 |
| ՀՎՀՀ 00801183 | |

| | |
|---|---|
| Տնօրեն | Տնօրեն |
| ________ /Ս.Մաքևոսյան/ | ________ /Ն. Մանուկյան/ |